ԻՐԱՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Արա Հովհաննիսյան

Մուտք

Հայկական սփյուռքի կազմավորումից ի վեր սփյուռքահայերի հայրենադարձության թեման մշտապես ունեցել է մեծ կարևորություն և արդիականություն: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները մեզ հիմք են տալիս կարծելու, որ ապագայում ևս մենք կարող ենք ականատես լինել նմանատիպ երևույթների: Իրաքահայերի հայրենադարձության թեմայի ուսումնասիրությունը և հատկապես նրանց ինտեգրման խնդիրների լուսաբանումը, նորովի մոտեցումներն ու մեկնաբանությունները մեզ հնարավորություն կտան հետագայում առավել արդյունավետ իրականացնել մեր հայրենակիցների ընդունումը, տեղաբաշխումն ու ինտեգրումը:

Հոդվածը շարադրելիս առաջնորդվել ենք պատմանկարագրողական, վերլուծական-համադրական և պատմահամեմատական մեթոդներով: Պատմանկարագրողական մեթոդի կիրառմամբ կատարվել է պատմական դեպքերի նկարագրություն ժամանակագրական, բովանդակային հաջորդականությամբ: Վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ իրականացվել է փաստերի վերհանում և հավաքագրում, վերլուծություն և ամփոփում: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ ներկայացվել և համեմատվել է ուսումնասիրվող գործընթացի առնչությունները նմանատիպ այլ իրադարձության հետ: Նշված մեթոդների կիրառումը հնարավորություն է տվել ընդգրկուն կերպով ներկայացնել 21-րդ դարի սկզբներին տեղի ունեցած իրաքահայերի հայրենադարձությունը:

Հայ-իրաքյան հարաբերությունները սկզբնավորվել են հնագույն ժամանակներում: Սակայն իրաքահայ գաղութը սկսել է ձևավորվել Աբբասյան խալիֆայության շրջանում (VIII-XIII դդ.)[1], բարգավաճել են հատկապես Բաղդադի և Բասրայի գաղութները: Իրաքահայերի թիվը ստվարացել է XVII դ. սկզբին, երբ Իրաք են եկել Պարսկաստանից (շահ Աբբաս I-ի հրամանով տեղահանված) և Թուրքիայից բազմաթիվ հայեր:

[1] http://diaspora.gov.am/hy/pages/48/iraq

Հետագայում իրաքահայ համայնքը համալրվել է ի հաշիվ XIX դ. վերջին Արևելյան և Արևմտյան Հայաստանից, ինչպես և Պարսկաստանից գաղթած մեծ թվով հայերի ու նաև Առաջին աշխարհամարտի արհավիրքներից փրկված հայ տարագիրների:

1920-ական թթ. սկզբին Իրաքում ապաստան է գտել շուրջ 90 հազար հայ գաղթական[1]: Ավելի ուշ նրանց մի մասը հեռացել է երկրից, մի մասն էլ (շուրջ 900 հոգի)[2] 1947-ին ներգաղթել է Հայաստան: Չնայած 1960-70-ական թթ. արտագաղթին Արևմուտքի երկրներ՝ իրաքահայության թիվը շոշափելիորեն չի նվազել:

1960-70-ական թթ. Իրաքում գործում էր կազմակերպված և տնտեսապես ապահով հայկական համայնք: Գաղութը մեծապես տուժել և զրկանքների է ենթարկվել Իրաք-իրանյան պատերազմի (1980-88 թթ.) և Պարսից ծոցում ծավալված ռազմական գործողությունների (1991 թ.) հետևանքով[3]: Իրաք-իրանյան պատերազմի ընթացքում իրաքահայությունը տվել է 104 զոհ: Պարսից ծոցի պատերազմից հետո Իրաքում ստեղծված քաղաքական և տնտեսական անբարենպաստ պայմանների (շրջափակում, էմբարգո) պատճառով հայերն արտագաղթել են երկրից: Որոշ թվով իրաքահայեր հաստատվել են Հայաստանում: 2002-թվականի ընթացքում Իրաքի քաղաքացիությունից հրաժարված 65 հայերի շնորհվել է ՀՀ քաղաքացիություն:

2003 թ. տվյալներով իրաքահայերի թիվը շուրջ 25 հազար էր[4]: Իրաքահայերը հիմնականում բնակվել են Բաղդադում, Բասրայում, նաև Մոսուլում, Կիրկուկում: Փոքրաթիվ հայ համայնքներ են եղել Հաբբանիայում, Խանաքինում, Սուլեյմանիայում, Հավրեզգում: Հայերն առավելապես զբաղվել են արհեստներով և առևտրով, կային նաև բժիշկներ, ճարտարագետներ, ճարտարապետներ, պետական ծառայողներ[5]: Իրաքից հայերի զգալի արտահոսք տեղի ունեցավ 2003 թ. Իրաքի դեմ հակահիրաքյան (անգլոամերիկյան) կոալիցիայի սկսած պատերազմի ընթացքում:

---

[1] **Փաշայան Ա.,** Իրաքահայ համայնքը՝ նոր մարտահրավերների առջև, 2007 http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2385

[2] **Եղիազարյան Ա., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա. և այլք,** Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Երևան, 2017, էջ 135-136:

[3] **Օհանեան Ս.,** Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, Երևան, 2016, էջ 23:

[4] https://bit.ly/3r8z1oQ. տե՛ս նաև http://diaspora.gov.am/hy/pages/48/iraq.

[5] **Դալլաքյան Կ.,** Հայ սփյուռքի պատմություն /համառոտ ակնարկ/, Երևան, 2004, էջ 206:

Իրաքահայերի հայրենադարձության պատճառները

Մերձավոր Արևելքում տիրող քաղաքական անկայուն իրավիճակը լրջորեն վտանգում էր ինչպես այնտեղ բնակվող հայության ֆիզիկական անվտանգությունը, այնպես էլ երբեմնի հզոր հայկական համայնքների գոյությունը: Այս ամենը տեղի հայության մի ստվար զանգվածի ստիպում էր դիմել հարկադրական հայրենադարձության:

2003 թ. Իրաքում սկսված պատերազմի հետևանքով այնտեղ ապրող հայերի բնականոն և երբեմնի բարեկեցիկ կյանքը խաթարվեց: Համայնքային կառույցների գործունեությունը գրեթե դադարեց: Տեղի հայ բնակչությունը հայտնվեց լրջագույն վտանգի առաջ: Այս ամենը պատճառ դարձավ, որպեսզի հազարավոր իրաքահայեր լքեն իրենց ծննդավայրը և տեղափոխվեն այլ երկրներ: Նրանց որոշ մասը տեղափոխվեց Հայաստան: Արևմուտք արտագաղթելու հնարավորություն ունենալով հանդերձ՝ իրաքահայերի մի մասը նախապատվություն էին տվել հայրենադարձությանը: Կային ընտանիքներ նաև, որոնց համար միակ ելքը Հայաստանում հաստատվելն էր; Իրաքահայերի Հայաստան գալու հիմնական պատճառը թերևս այն էր, որ նրանք Հայաստանը համարում էին իրենց հայրենիքը: Սերը հայրենիքի հանդեպ և ազգային պատկանելիությունը վճռորոշ էին այս հարցում: Նրանցից շատերի կարծիքով ազգային ինքնության պահպանման լավագույն գրավականը Հայաստանում ապրելն է[1]:

Հայաստան տեղափոխվելով՝ իրաքահայերը ստիպված չէին բախվել նոր լեզու սովորելու հոգեբանական հավելյալ ճնշմանը, ընդհակառակը՝ հնարավորություն ունեին ավելի կատարելագործելու լեզվական գիտելիքները: Անկախ արևելահայերենի հետ իրաքահայերի խոսվածքի որոշակի տարբերությանը այնուամենայնիվ հայերենի իմացությունը նրանց հնարավորություն էր տալիս տեղացիների հետ շփվել չմիջնորդավորված: Իրաքահայերի համար շատ կարևոր էր նաև աշխարհագրորեն Հայաստանի Իրաքին մոտ լինելը: Հայաստանում ապրելուն նախապատվություն տալու պատճառներից մեկն էլ օտար ափերում վերստին խարիսխ գցելու դժկամությունն էր: Իրաքահայերի համար շատ կարևոր հանգամանք էր Հայաստանի անվտանգ կյանքը: Արդարացիորեն զգուշանալով Մերձավոր Արևելքի պայթունավտանգ իրավիճակից՝ նրանք նախընտ-

---

[1] **Բեժանյան Ա.,** Կորսված հնարավորություններ. Իրաքահայերի հայրենադարձությունը 2003-2008 թթ., Երևան, 2020, էջ 116:

րում էին Հայաստանը՝ որպես դեգերումների վերջին հանգրվան[1]: Ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետությունում գործող հատուկ կացության կարգավիճակը նույնպես խթան էր հայրենիքում հաստատվելու համար:

Այսպիսով՝ մենք կարող ենք արձանագրել, որ իրաքահայերի Հայաստան տեղափոխման և հաստատման համար կային բավականին լուրջ հիմքեր, որոնք նպաստեցին վերջիններիս հայրենադարձությանը:

Իրաքահայերի տեղաբաշխումը

Իրաքահայերը հիմնականում Հայաստան էին տեղափոխվում իրեց ընտանիքներով: Երկարաժամկետ կեցության նպատակ ունենալով՝ իրաքահայերի մի մասը տեղափոխվել էր Իրաքում ունեցած անշարժ գույքի վաճառքից ստացած գումարներով և դրանցով Հայաստանում ձեռք բերել բնակարաններ: Մյուսները, քանի որ չէին կարողացել վաճառել կամ վարձակալության տալ իրենց գույքը մնացել էին Իրաքում, իսկ ընտանիքի մի մասին, հիմնականում կանանց և երեխաներին ուղարկել էին Հայաստան: Իրաքում սեփականություն չունեցող ընտանիքները Հայաստան էին տեղափոխվել իրենց կահկարասու վաճառքից գոյացած միջոցներով ու խնայողություններով և բնակվում էին վարձով կամ բարեկամների տանը[2]: Այն ընտանիքները, որոնց գույքն Իրաքում թալանվել էր Հայաստան էին տեղափոխվել ձեռնունայն՝ փրկելով սեփական կյանքը:

Հայաստան ներգաղթած իրաքահայերի մի մասին տեղավորեցին Մասիսի շրջանի Դարբնիկ գյուղում[3]: 2008 թ. ՀՀ տարածքային նախարարության Միգրացիոն գործակալության կողմից Արարատի մարզի Դարբնիկ գյուղի նախկին գյուղատնտեսական քոլեջի շենքը տրամադրվել էր ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակին[4]: Մոտ մեկ տարում քոլեջը վերածվեց 46 սոցիալական բնակարանով շենքի: 2009 թ. իրաքահայ ընտանիքներին այս-

---

[1] **Բեժանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 120:

[2] **Բեժանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 119:

[3] **Մարաշլյան և այլք,** Հայրենադարձների փորձն ու ինտեգրումը Հայաստանում. Խոչընդոտներ և հնարավորություններ, Երևան, 2014, էջ 31. https://bit.ly/3dIjCJ0:

[4] **Տոնիկյան Ս.,** Իրաքի հայերը, գիտաժողովի նյութեր /29-31 մայիս, 2017 թ./, Հայկազեան համալսարան, Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոն, Հայկական սփիւռք Ե., Բեյրութ, խմբ. Տագէսեան Ա.,Haigazian University press., 2021:

տեղ կացարան տրամադրվեց, սակայն տեղափոխված 46 ընտանիքներից միայն 26-ը հաստատեց մշտական բնակություն, մնացածը, չհարմարվելով տեղի պայմաններին, տեղափոխվեց Երևան: Իրաքահայերի մի մասը /շուրջ երկու տասնյակ/ տեղավորվեց Երևանի հանրակացարաններում, մի մասը բնակարաններ գտավ իրենց նախաձեռնությամբ, մի մասը տեղափոխվեց Հայաստանի այլ շրջաններ և այլն: Ընդհանուր առմամբ սկսած 2003 թվականից Հայաստան էին ներգաղթել շուրջ 2.000 իրաքահայեր, բայց նրանցից միայն մոտ 1000-ը մնացին Հայաստանում[1]:

Ինչպես տեսնում ենք Հայաստան տեղափոխված իրաքահայերի շուրջ կեսը որոշակի ժամանակ անց հեռացան երկրից: Նրանց մի մասը անշուշտ Հայաստան էր եկել հետագայում այլ երկիր տեղափոխվելու նպատակով, սակայն մեր կարծիքով համապատասխան քաղաքականության իրականացման պարագայում հնարավոր կլիներ մյուս մասին պահել Հայաստանում: Խոսքը վերաբերում է ինչպես տեղաբաշխման և սոցիալական ծրագրերի ներդրման համընդհանուր խնդիրներին, այնպես էլ Հայաստանում վերջիններիս սահուն ինտեգրման համար համապատասխան պայմանների ստեղծմանը:

Իրաքահայերի սոցիալ-տնտեսական վիճակը Հայաստանում՝

Իրաքահայերի համար կյանքը Հայաստանում սկզբնական շրջանում զուգորդվում էր մատչելի գների հետ, որտեղ կարելի էր հարմար գնով տուն գնել և փոքր գումարով ապրել: Հայաստանում հաջողության հասած իրաքահայերը՝ որպես հայրենադարձության ջատագովներ, մյուսներին հորդորում էին նույնպես տեղափոխվել Հայաստան: Սակայն, ավելի ուշ, Հայաստանի մասին դրական պատկերացումները երբեմն հիասթափությունների տեղիք էին տալիս, երբ իրաքահայերը բախվում էին սոցիալական լուրջ խնդիրների: Նրանց ամենաշատ անակնկալի էին բերում Հայաստանում առկա որոշ գներ, որոնք չէին համապատասխանում աշխատաշուկայում ընդունված աշխատավարձերին[2]: Լինելով խոցելի և կախված արտաքին աջակցությունից՝ իրաքահայերն ակնկալում էին ունենալ հասցեական ծառայություններից օգտվելու իրավունք՝ բնակա-

---

[1] **Մարաշլյան և այլք,** նշվ. աշխ., էջ 31, տե՛ս նաև https://bit.ly/3DShhpj:

[2] **Բեժանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 124:

ման, սնունդ, կրթություն, սոցիալական նպաստներ և այլն: Եղել են դեպքեր, երբ իրաքահայերից ոմանք մշտական բնակության նպատակով Հայաստան տեղափոխվելուց հետո ի վիճակի չլինելով պատշաճ աշխատանք գտնել և սպառելով իրենց հետ բերած խնայողությունները՝ ստիպված են եղել վերադառնալ Իրաք:

Թեև իրաքահայերից շատերը դժգոհում էին Հայաստանում առկա սոցիալական խնդիրներից, այնուամենայնիվ, պետք է նշել, որ նրանց մի մասը Հայաստան գալուց առաջ հետևելով հայաստանյան անցուդարձերին՝ տեղյակ էր այստեղի դժվարություններին: Գաղտնիք չէ, որ տեղացիների և հայրենադարձների միջև առկա է մշակութային և լեզվական որոշակի հեռավորություն: Հայրենադարձները հիմնականում չեն իմանում կամ վատ են իմանում հայրենիքում կիրառվող մայրենի լեզուն ու ազգային մշակույթի յուրահատկությունները: Նրանցից միայն քչերն ունեին բարձրագույն կրթություն, մեծ մասամբ գերակշռում էին արհեստավորները[1]:

Մինչև 1991 թ. Ծոցի պատերազմը Իրաքի կրթական համակարգը համարվում էր տարածաշրջանի լավագույններից մեկը՝ որակի և հասանելիության առումներով[2]: Իրաքահայերից շատերը այնտեղ ստացել էին բարձրագույն կրթություն, որը նրանց հնարավորություն էր տվել աշխատելու պետական հաստատություններում, ծառայությունների, ճարտարագիտության ու նավթարդյունաբերության բնագավառներում: Այդ ոլորտի աշխատողները Հայաստանում բախվում էին իրենց կրթությանն ու աշխատանքային փորձին համապատասխան աշխատանք գտնելու դժվարությանը: Հարկ է նշել, որ վերամասնագիտանալու հնարավորությունների բացակայության և գործազուրկ դառնալու վախի պատճառով շատերը Հայաստան չէին տեղափոխվում; Առավել նպաստավոր վիճակում էին իրաքահայ արհեստավորներն ու մասնագիտական կրթություն ունեցողները, ովքեր ճկուն էին Հայաստանում ոչ թե պարտադիր իրենց մասնագիտությամբ, այլ որևէ աշխատանք գտնելու հարցում:

Հայաստանում ապրելու ներգաղթյալների ձգտումն ու կարողություններն անշուշտ շատ կարևոր էին նոր իրողություններին հարմարվելու և սոցիալ-տնտեսական խնդիրները հաղթահարելու համար: Սոցիալ-

---

[1] **Մարաշլյան և այլք,** նշվ. աշխ., էջ 31:

[2] **Մարաշլյան և այլք,** նշվ. աշխ., էջ 149:

տնտեսական խնդիրների հաղթահարումը հանդիսանում էր կարևորագույն բաղկացուցիչ Հայաստանում իրաքահայերի հաստատման և լիարժեք ինտեգրման համար, սակայն, ինչպես տեսնում ենք, ոչ բոլորին էր հաջողվում լուծել զբաղվածության հարցերը և կարգավորել առկա խնդիրները:

Հայաստանը որպես տարանցիկ երկիր իրաքահայերի համար

Պետք է նշել, որ իրաքահայերի Հայաստան տեղափոխվելուն դեմ էին համայնքային որոշ ղեկավարներ և թեմի առաջնորդը[1]: Միևնույն ժամանակ տարիներ ի վեր զանգվածաբար արևմտյան երկրներ արտագաղթած հարազատները նրանց ուղղորդում էին արտերկիր: Որոշ իրաքահայեր Հայաստանն օգտագործում էին որպես տարանցիկ երկիր՝ այլ երրորդ երկիր /հատկապես Արևմուտքի երկրներ/ տեղափոխվելու ճանապարհին:

Լոս Անջելեսում ստեղծվել էր իրաքահայերի օգնության հիմնադրամ, սակայն տեղի հայ ավանդական կուսակցությունները ձեռնպահ էին մնում հիմնադրամին աջակցելուց՝ պայմանավորելով դա Հայաստանի իշխանությունների հանդեպ ունեցած անվստահությամբ[2]: Նրանք վստահ էին, որ իրաքահայերին Հայաստանում լավ ապագա չի սպասվում:

Մեր կարծիքով նման մոտեցումը անթույլատրելի է, քանզի ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում պետք է տարվի այնպիսի քաղաքականություն, որը հայության ստվար զանգվածներին նմանատիպ իրավիճակներում կուղղորդի դեպի Հայաստան՝ նպաստելով հայերի ազգային ինքնության պահպանմանն ու սեփական պետության զարգացմանն ու բարգավաճմանը: Օտար երկիր տեղափոխվելու պարագայում նրանք կանգնելու են ուծացման վտանգի առաջ՝ աստիճանաբար հեռանալով սեփական արժեհամակարգից և մշակութային միջավայրից:

Ըստ իրաքահայերի՝ Արևմուտքի երկրներ տեղափոխվելու իրենց հիմնական պատճառները Հայաստանում առկա դժվարություններն էին՝ ցածր աշխատավարձեր, ապաստանով ապահովման և թիրախավորված սոցիալական ծրագրերի բացակայություն, կրթական, առողջապահա-

---

[1] Կորսված հնարավորություններ. Իրաքահայերի հայրենադարձությունը 2003-2008 թվականներին, https://ankakh.com/hy/article/3595.

[2] Նույն տեղում:

կան և մասնագիտական վերաորակավորման ծառայությունների անհասանելիություն կամ բացակայություն, ինչպես նաև արևմուտքում բնակվող բարեկամներին միանալու ցանկությամբ և այնտեղ փախստականի կարգավիճակին համապատասխան բարվոք պայմաններով[1]:

Եթե փորձենք համեմատել իրաքահայերի հայրենադարձության արդյունքում Հայաստանի Հանրապետություն տեղափոխված և այստեղ հաստատված հայերի թվաքանակը սիրիական ճգնաժամի հետևանքով 2011 թվականից Հայաստան ներգաղթած սիրիահայերի հետ ապա կտեսնենք, որ տոկոսային առումով Հայաստան ներգաղթած և Հայաստանում հաստատված սիրիահայերի թվաքանակը գրեթե նույնն է, ինչ իրաքահայերի պարագայում[2]: Հատկանշական է նաև այն փաստը, որ առկա թվերը անընդհատ փոխվում են և հիմնականում ունեն նվազման միտում: Թեև սիրիահայերի ներգաղթի ժամանակ պետական մարմինները բավական մեծ աշխատանք կատարեցին վերջիններիս խնդիրները կարգավորելու ուղղությամբ, այնուամենայնիվ, Հայաստան ժամանած սիրիահայերը՝ չնայած կատարված աշխատանքներին և ձեռք առնված միջոցառումներին, հիմնականում բախվեցին այն նույն խնդիրներին, ինչ իրաքահայերը[3]: Սփյուռքի նախարարության, պետական տարբեր գերատեսչությունների, միջազգային կառույցների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների կողմից մշակված և իրականացված աջակցման ծրագրերը հիմնականում բավարարել են հայրենադարձների առաջնային կարիքները և կրել են կարճաժամկետ բնույթ[4]: Շատ քիչ ծրագրեր են եղել, որոնք նպաստել են սիրիահայերի Հայաստանում հաստատմանը և նրանց արտագաղթի կանխմանը:

Միաժամանակ պետք է փաստել, որ այս դեպքում ևս Հայաստան ժամանած սփյուռքահայերի մի մասն ի սկզբանե Հայաստանի Հանրապետությունը դիտարկում էր որպես տարանցիկ երկիր: Նրանց մյուս

---

1 **Բեժանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 121:

2 **Հովյան Վ.,** Սիրիահայերի հիմնախնդիրները Հայաստանում https://bit.ly/3UvY7eS:

3 **Հակոբյան Ա.,** Սիրիահայերը Հայաստանում. Հայրենադարձներ, թե փախստականներ /իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացիայի հիմնախնդիրներ/, Հայաստան, 2017, էջ 18-28, http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/.

4 **Տանաջյան Լ., Ներսիսյան Ս., Բարսեղյան Ս.,** Հայրենադարձների ինտեգրման խնդիրները հայրենիքում (սիրիահայերի օրինակով), Երևան, 2020, էջ 26-27. https://msrf.aua.am/files/2020/04/Final_Report.pdf.

հատվածն էլ ցանկություն ուներ իրավիճակի հանգուցալուծման դեպքում հետ վերադառնալ Սիրիա: Այս իրավիճակում հարկադրական հայրենադարձների Հայաստանում մնալու և հաստատվելու հարցը բավական բարդանում էր: Նշված խմբերին Հայաստանում պահելու հնարավորությունները շատ սահմանափակ էին անկախ համապատասխան մարմինների կատարած աշխատանքներից և ընդունող հասարակության դրսևորած վարքագծից: Կար մի հատված էլ, որը չհարմարվելով տեղի իրողություններին՝ հեռացավ Հայաստանից: Անշուշտ առկա իրողությունները բավական բարդացնում էին ներգաղթյալների Հայաստանում հաստատվելու հնարավորությունները, սակայն միաժամանակ կարծում ենք, որ Հայաստանում առավել բարվոք պայմանների առկայության պայմանների պարագայում անգամ շատ դժվար կլիներ երկրում պահել այն ներգաղթյալներին, ովքեր ի սկզբանե միտված էին հեռանալ:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ հայրենադարձների մի զգալի հատվածի Հայաստանում չմնալու պատճառը ոչ միայն Հայաստանում առկա տարատեսակ խնդիրներն ու դժվարություններն էին, այլ վերջիններիս այլ երկրներ տեղափոխվելու միտումը:

Հայաստանի անկախացումից հետո հետխորհրդային շրջանում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով Հայաստանում չի ստեղծվել պայմաններ զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու համար: Մինչ այժմ տեղի ունեցած հայրենադարձության օրինակները կրել են կամ հարկադրական բնույթ, կամ էլ եղել են շատ փոքրաթիվ՝ հաշվի առնելով Հայկական սփյուռքի մեծ աշխարհագրությունն ու թվաքանակը:

Փաստորեն երկաթյա վարագույրի վերացումից հետո անգամ սփյուռքահայերը չշտապեցին հայրենադարձվել Հայաստանի Հանրապետություն: Այս հանգամանքը կարելի է պայմանավորել մի կողմից այս ուղղությամբ պետության վարած ոչ արդյունավետ քաղաքականությամբ, մյուս կողմից էլ սփյուռքահերի հիմնական հատվածի մոտ հայրենադարձվելու ցանկության բացակայությամբ: Կարելի է անշուշտ բերել տարատեսակ պատճառներ այս առիթով, և նշել, որ իշխանությունները չեն կատարել անհրաժեշտ քայլեր հայրենադարձության քաղաքականության ուղղությամբ, չեն ընդունել օրենք հայրենադարձության մասին, պետությունը գտնվել է ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում և այլն: Բայց միաժամանակ մենք տեսնում ենք, որ այն սփյուռքահայերը՝ թեկուզև

փոքրաթիվ, որոնք ցանկացել են վերադառնալ և հաստատվել հայրենիքում, այնուամենայնիվ, հայրենադարձվել են՝ ուշադրություն չդարձնելով առկա խնդիրներին, ինչը մենք տեսնում ենք նաև իրաքահայերի պարագայում:

Կարգավիճակը

2003-2009 թթ. Հայաստանում ժամանակավոր ապաստան հայցող իրաքահայերը 987-ն էին: Նրանցից 166-ին շնորհվել էր ՀՀ քաղաքացիություն, իսկ 799-ը ստացել էր հատուկ կացության կարգավիճակ[1]: Ժամանակավոր ապաստան հայցողի կարգավիճակ ձեռք բերելու համար իրաքահայերը Հայաստանում դժվարությունների չէին բախվում: Նրանք ունեին նաև հատուկ կացության կարգավիճակ ստանալու հնարավորություն, ինչն ընձեռում էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտավորություններ՝ բացառությամբ ընտրական իրավունքի: Այս ամենը, իհարկե, խոսում էր պետական որոշակի մոտեցման մասին:

Բայցևայնպես Հայաստանի՝ ժամանակավոր կացարանի հայցման կարգի անկատարությունը, ինչպես նաև հայրենադարձի կարգավիճակի և դրանից բխող արտոնությունների չգոյությունը, վկայում էին վարչարարական, սոցիալական և իրավական պաշտպանության ոլորտներում առկա բացթողումների մասին: Ժամանակի ընթացքում իրաքահայերի մեծամասնությունը ստացավ ՀՀ քաղաքացիություն, սակայն 2014 թ. դրությամբ ներգաղթյալներից մոտ 150 մարդ դեռևս չուներ Հայաստանի քաղաքացիություն[2]: Նրանք պահում են փախստականի կարգավիճակը՝ հուսալով, որ այդպես կարող են օգտվել որոշակի առավելություններից կամ այլ երկրում հաստատվելու հնարավորությունից:

Ինտեգրումը

Իրաքահայերի ինտեգրումը հայաստանյան իրողություններին հեշտ չի ընթացել, ինչը շատ բնական էր՝ հաշվի առնելով լեզվական խնդիրները, մտածելակերպի, վարքագծի տարբերությունները: Իրաքահայերից ոմանք շեշտում էին հայրենադարձությանը նպաստող միջավայրի բացա-

---

[1] Կորսված հնարավորություններ. Իրաքահայերի հայրենադարձությունը 2003-2008 թվականներին. https://ankakh.com/hy/article/3595.

[2] **Մարաշլյան և այլք,** նշվ. աշխ., էջ 31:

կայությունը, որի պատճառով ակամայից հայտնվում էին Հայաստանում ապրելու իրենց իրավունքն ամեն քայլափոխի ապացուցելու կարգավիճակում[1]: Ընդհանուր առմամբ՝ հայոց լեզվի իմացության ավելի բարձր մակարդակ ունեցող իրաքահայերը հեշտությամբ էին աշխատանք գտնում և սահուն կերպով համակերպվում Հայաստանում քան նրանք, ում հայերենը լրջորեն կաղում էր: Բայց եթե լիներ պետական համապարփակ ծրագիր այդ ամենը կարելի էր առավել դյուրին կերպով ժամանակի ընթացքում հաղթահարել: Հայաստանը տվյալ ժամանակահատվածում չուներ իրաքահայերին երկրի կյանքում ներգրավելու հատուկ քաղաքականություն և պետական հստակ ծրագիր: Իշխանությունների և միջազգային կառույցների միջև համագործակցությունը հեռու էր իրաքահայերի կենսական պահանջները բավարարելու երկարաժամկետ, հիմնավոր լուծումներ գտնելուց:

Ըստ իրաքահայերի՝ Հայաստանում իրենց միաձուլմանը նպաստում էին համանման ավանդույթներն ու սովորույթները, ընդհանուր ճակատագիրը, միմյանցից սովորելու ցանկությունը, իրաքահայերի՝ հայ ինքնությանը կառչած լինելն ու տեղացիների՝ հայ մարդուն հատուկ հյուրասեր ու ջերմ բնավորությունը[2]: Իրաքահայերից շատերը տեղացիներին բնութագրում են որպես բարի, աջակցող, պատրաստակամ, հյուրասեր, հարգալից մարդկանց: Հայաստանյան հասարակության մտերմիկ վերաբերմունքը նրանց ընկալումներում որակվել է որպես կարևորագույն առավելություն: Այս ամենը անշուշտ մեծապես նպաստել է իրաքահայերի առավել դյուրին ինտեգրմանն ու գոյություն ունեցող դժվարությունների հաղթահարմանը:

Աջակցությունը

Իրաքահայերի հայրենադարձության ընթացքում վերջիններս ստանում էին տարատեսակ օգնություն տարբեր պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից, ինչպես նաև անհատ մարդկանց կողմից: Պետք է նշել, սակայն, որ իրաքահայերի ներգաղթի ժամանակ Սփյուռքի նախարարությունը դեռևս ձևավորված չէր: Իրաքահայերի օգնության հարցում մեծ դեր ունեին ՄԱԿ-ի փախստականների գրասենյա-

---

[1] **Բեժանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 133:

[2] Նույն տեղում:

կը, Հայկական Կարմիր խաչը, ինչպես նաև «Առաքելություն Հայաստան» կազմակերպությունը (նրանց ինտեգրման, կացարանների տրամադրման, լեզվի դասընթացների կազմակերպման առումով)[1]:

Հայաստանյան հասարակությունում իրաքյան պատերազմի հետևանքով հայերի խոցելիության ընկալման, պետական, հասարակական և մասնավոր ոլորտներում ներգրավման հատուկ լծակների բացակայությունն իսկապես առաջացնում էր լուրջ խոչընդոտներ հայրենիքում ոչ թե օտար, այլ տիրոջ իրավունքով ապրելու համար: Հայաստանում սոցիալական, առողջապահական, կրթական, ինչպես նաև աշխատանք գտնելու հարցում իրաքահայերին հիմնականում օգնության էին հասնում մյուս իրաքահայերը, ծանոթները, հարազատները, ընկերները, հարևաններն ու հասարակական կազմակերպությունները[2]: Իրաքահայերի ճնշող մեծամասնությունը կարծում էր, որ Հայաստանի կառավարությունը պետք է իրենց հայրենադարձությունը դարձնի լուծման ենթակա խնդիր և խրախուսի նրանց լիակատար միաձուլումը հայաստանյան հասարակությունում:

Ինստիտուցիոնալ մեխանիզմների գոյությունն ու համակարգված աշխատանքը անշուշտ կնվազեցնեին առկա խնդիրները և կդյուրացնեին ներգաղթյալների համար դժվարությունների հաղթահարումը, սակայն իրաքահայերի հայրենադարձման նամանավանդ սկզբնական փուլում այս ոլորտում առկա էին մեծ բացեր: Դա էր պատճառը, որ ՀՀ կառավարությունը 2010 թ. մարտի 25-ին ընդունեց ՀՀ տարածքում բնակվող իրաքահայերի ինտեգրման հայեցակարգ[3]:

Իրաքահայերի ինտեգրման հայեցակարգ

ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 25-ի նիստի N11 արձանագրային որոշման Հայաստանի Հանրապետությունում բնակվող իրաքահայերի ինտեգրման հայեցակարգով նախատեսվում էր հստակեցնել Հայաստանում բնակվող իրաքահայերի ինտեգրման ուղղությունները (Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մարտի 25-ի

---

1 **Մարաշլյան և այլք,** նշվ. աշխ., էջ 31:

2 **Բեժանյան Ա.,** նշվ. աշխ., էջ 140:

3 Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մարտի 25-ի նիստի N 11 արձանագրային որոշման ՀՀ-ում բնակվող իրաքահայերի ինտեգրման հայեցակարգ. http://www.irtek.am/views/act.aspx?aid=52974.

նիստի N 11 արձանագրային որոշման ՀՀ-ում բնակվող իրաքահայերի ինտեգրման հայեցակարգ): Փաստաթղթում արտացոլված են այն առաջնահերթությունները, որոնք կարևոր են ինտեգրման գործընթացը բարեհաջող իրականացնելու համար: Հասարակությանը իրաքահայերի ինտեգրումը բարդ և երկարաժամկետ գործընթաց է, որը պահանջում է իրավական, տնտեսական, կազմակերպչական լուծումներ:

Ըստ հայեցակարգի՝ տվյալ ժամանակահատվածում Հայաստանում բնակվում էին շուրջ 750 իրաքահայեր: Վերջիններս ներկայացված էին հետևյալ խմբերով.

1. ընտանիքներ-187,
2. կանայք – 263,
3. տղամարդիկ – 277.
4. երեխաներ /մինչև 4 տարեկան/ - 38,
5. պատանիներ - /5-17 տարեկան/ - 86,
6. չափահասներ - /18-60 տարեկան/ - 356,
7. ծերեր – /60 տարեկանից բարձր/ - 60,
8. աշխատանք ունեցողներ – 113,
9. բնակարան ունեցողներ – 47,
10. բնակարան չունեցողներ – 140:

Հայեցակարգի համաձայն ՀՀ կառավարությունը Հայաստանում բնակություն հաստատած և բնակություն հաստատող իրաքահայերի վերաբերյալ պետք ընդուներ որոշում՝ երաշխավորելով պետական հովանավորություն և առանձնահատուկ պայմաններ: Այն պետք է ուսումնասիրեր իրաքահայերի սոցիալական, մասնագիտական և տարիքային կազմը, նրանց խնդիրները Հայաստանի Հանրապետությունում /մայրենի լեզվի իմացության մակարդակը, նրանց ակնկալիքները պետությունից, հայրենիք տեղափոխվելու պատճառները, Հայաստանից որոշ հատվածի տեղափոխվելու պատճառները և այլն/՝ ըստ առանձին խմբերի:

Ինտեգրման ծրագրերում ըստ հայեցակարգի անհրաժեշտ է հաշվի առնել իրաքահայերի տարբեր տարիքային խմբերի առանձնահատկությունները՝ ծանոթացնելով վերջիններիս Հայաստանի Հանրապետության պետական կարգին: Պետք է համագործակցել իրաքահայ կազմակերպությունների հետ ինտեգրման կարգը դյուրացնելու համար: Անկախ Հայաստանում իրաքահայերի իրավական կարգավիճակից նրանց խնդիրներն ու նրանց համար մշակվող ծրագրերը դիտարկվելու էին որ-

պես մեկ ամբողջություն:

Հայեցակարգի՝ համաձայն իրաքահայերի ինտեգրումն անհրաժեշտ է իրականացնել կրթամշակութային, սոցիալական /հասարակական-քաղաքական, հասարակական-կենցաղային/, իրավական, տնտեսական և այլ ուղղություններով[1]:

Կրթամշակութային ինտեգրումն իրաքահայերին հայրենիքի հետ կապելու ամենակարևոր ուղղություններից է: Այն իր մեջ ընդգրկում է մի շարք բաղադրիչներ, որոնցից են՝ հայոց լեզվի, հայոց պատմության, գրականության, աշխարհագրության ուսուցում, համալսարանական մեթոդական ուսուցման ծրագրերի մշակում և դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ հաշվի առնելով իրաքահայերի հայոց լեզվի, հայոց պատմության, աշխարհագրության իմացության աստիճանը և տարիքը: Ազգային մշակույթի, արվեստի դասավանդում, երգի, պարի, արվեստի խմբերում, ուսումնական կենտրոններում նրանց ներգրավում, ծանոթացում ազգային ու եկեղեցական ծեսերին և տոներին:

Սոցիալական ինտեգրումը հայեցակագում բաժանված է երկու հիմնական բաղադրիչների՝ հասարակական-քաղաքական և հասարակական-կենցաղային[2]: Հասարակական-քաղաքական ինտեգրման համար շատ կարևոր է իրաքահայերի համար կազմակերպել դասընթացներ, սեմինարներ Հայաստանում իրավական համակարգի, պետական կառուցվածքի, պետական ինքնակառավարման մարմինների, կրթական համակարգի աշխատանքային գործունեություն սկսելու վերաբերյալ: Անհրաժեշտ է նպաստավոր պայմաններ ստեղծել, որպեսզի իրաքահայերն արագ ինտեգրվեն համայնքային կյանքում:

Հասարակական-կենցաղային ինտեգրման համար կարևոր է կազմակերպել դասընթացներ, որտեղ իրաքահայերը կծանոթանան տեղական կենցաղավարությանը, սովորույթներին, ավանդույթներին: Այս հարցում շատ կարևոր է նաև աշխատանքներ տանել այն բնակիչների հետ, որտեղ բնակվում են իրաքահայերը, որպեսզի տեղացիները ևս պատրաստ լինեն իրաքահայերին ընդունելու որպես իրենց համայնքի

---

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. մարտի 25-ի նիստի N 11 արձանագրային որոշման ՀՀ- ում բնակվող իրաքահայերի ինտեգրման հայեցակարգ. http://www.irtek.am/views/act.aspx?aid=52974.

[2] Նույն տեղում:

լիիրավ անդամներ: Չափազանց կարևոր է իրաքահայերի երեխաների համար «պարտադրված» համագործակցության պայմանների ստեղծումը, այսինքն նրանց ընդգրկումը մշակութային /երգի, պարի/ և սպորտային խմբակներում: Անհրաժեշտ է իրաքահայերի շրջանում իրականացնել սոցիալական աջակցության ծրագրեր:

Տնտեսական ինտեգրման կարևոր բաղադրիչը իրաքահայերի համար աշխատատեղերի և զբաղվածության հարցի լուծումն է, ինչպես նաև աջակցությունը նրանց կողմից գործարար ծրագրերի իրականացմանը, ներդրումների կատարմանը և այլ հարցերում: Այդ նպատակով անհրաժեշտ է ձգտել ստեղծելու աշխատատեղեր ըստ իրաքահայերի մասնագիտական ունակությունների: Աշխատաշուկայի ուսումնասիրության հիման վրա նպաստել իրաքահայերի վերապատրաստմանը նոր մասնագիտություններ ձեռք բերելու համար: Իրաքահայերի զբաղվածության խնդրի լուծման համար՝ ելնելով նրանց մասնագիտական ունակություններից, տեղավորել այն բնակավայրերում, որտեղ կա տվյալ մասնագետի կարիքը[1]:

Իրավական ինտեգրումը ենթադրում է իրաքահայերի ծանոթացում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իրավական համակարգին՝ հիմնական շեշտը դնելով այն իրավական ակտերի և նորմերի վրա, որոնք հատկապես անհրաժեշտ են առաջին շրջանում նրանց ինտեգրումն արագացնելու համար /քաղաքացիության մասին, կրթության մասին, ընտանեկան, աշխատանքային, քրեական օրենսգրքերի և այլն/: Արդյունավետ իրավական ինտեգրման համար կարևոր է իրաքահայերին Հայաստանի Հանրապետության քաղաքացիության տրամադրումը[2]:

Իրաքահայերի ինտեգրման գործընթացի կազմակերպման համար նպատակահարմար է, որ սահմանվի այդ գործընթացը համակարգող պետական կառավարման մարմին, մշակվեն և իրականացվեն ոլորտային ծրագրեր: Այդ աշխատանքներին նպատակահարմար է, որպեսզի մասնակցեն համապատասխան նախարարությունները և պետական ինքնակառավարման մարմինները: Ըստ անհրաժեշտության պետք է ստեղծել իրաքահայերի ինտեգրման հարցերով հասարակական կազմա-

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

կերպություններ, աշխատանքային խմբեր, ինչպես նաև ինտեգրման կենտրոններ, հատուկ իրաքահայերի համար նախատեսված ավաններ:

Ինչպես տեսնում ենք իրաքահայերի ինտեգրման հայեցակարգում բավական մանրամասն ներկայացված է այն, ինչ անհրաժեշտ էր կատարել վերջիններիս հայաստանյան կյանքին հնարավորինս ադարագ և դյուրին ինտեգրելու համար, սակայն գործընթացի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է հիշյալ խնդիրները համակողմանի և միաժամանակ լուծել, այլապես որևէ ուղղության չիրականացման դեպքում կարող է տուժել ողջ գործընթացը:

Մեր կարծիքով իրաքահայերի ինտեգրման հայեցակարգի ընդունումը և այնտեղ նշված դրույթները շատ կարևոր էին և կարող էին բավականին օգտակար լինել վերջիններիս համար, սակայն միաժամանակ պետք է փաստենք, որ այն ինչ-որ առումով ուշացած էր, քանզի 2003 թվականից Հայաստանում ապաստանած իրաքահայերի մի ստվար հատված չհարմարվելով առկա իրողություններին՝ արդեն հեռացել էր Հայաստանից: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ հայեցակարգի ընդունումից հետո իրաքահայերի ինտեգրմանը նպաստող շատ հարցերում տեղի ունեցան որոշակի տեղաշարժեր: Շատ կարևոր է, որպեսզի նմանատիպ որոշումները ընդունվեն ժամանակին: Նման պարագայում հնարավոր կլինի առավել մեծ քանակությամբ սփյուռքահայերի ընդունել և ինտեգրել հայրենիքում:

Վերջաբան

Զգալի թվով իրաքահայերի ներհոսքն ու հաստատումը Հայաստանում խարխլեց և փոխեց շատ սփյուռքահայերի հայրենադարձությանն ընդիմանալու հիմնավորումներն ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում: Հայաստանի վերաբերյալ նախկինում եղած պատկերացումները դարձան առավել իրական: Սփյուռքում բնակվող հայության մի ստվար զանգված հասկացավ, որ անկախ Հայաստանի Հանրապետությունում առկա խնդիրներից և դժվարություններից այստեղ հնարավոր է հաստատվել և նոր կյանք սկսել: Նշված եզրահանգման վառ ապացույց է հանդիսանում այն փաստը, որ տարիներ անց սիրիական ճգնաժամի հետևանքով սեփական բնակավայրերը լքած հազարավոր սիրիահայեր իրենց հայացքն ուղղեցին դեպի հայրենիք՝ ներգաղթելով և հաստատվելով Հայաստանում:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ 21-րդ դարի սկզբներին

տեղի ունեցած իրաքահայերի հայրենադարձության արդյունքում սփյուռքահայերի մի ստվար հատված տեղափոխվեց և հաստատվեց հայրենիքում, որի արդյունքում փոխվեցին Հայաստանի վերաբերյալ Սփյուռքում առկա որոշակի կարծրատիպեր: Պետական մարմինները սկսեցին առավել մեծ ուշադրություն դարձնել նմանատիպ գործընթացների՝ ստեղծելով համապատասխան մարմիններ և ընդունելով տարատեսակ հայեցակարգեր և որոշումներ:

Բանալի բառեր՝ *Իրաքահայեր, հայրենադարձություն, սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինտեգրում, տարանցիկ երկիր, կարգավիճակ, աջակցություն, հայեցակարգ, սփյուռքահայ համայնքներ:*

РЕПАТРИАЦИЯ ИРАКСКИХ АРМЯН В НАЧАЛЕ 21-ГО ВЕКА

Ара Оганесян

Ключевые слова: *Иракские армяне, репатриация, социально-экономическими проблемами, транзитная страна, статус, поддержка, армянские общины, концепция.*

Из за войны в Ираке в 2003 году в Армению иммигрировало значительное количество армян. Основной причиной приезда в Армению было то, что они считали Армению своей родиной. Некоторые иракские армяне поселились в Ереване, а другие переехали в другие части Армении. Несмотря на поддержку государства, неправительственных и международных организации, а также частных лиц, некоторые из них столкнулись в Армении с социально-экономическими проблемами. Интеграционные процессы также были достаточно сложными. Подавляющее большинство проживающих в Армении иракских армян получили гражданство Армении. Некоторые иракские армяне рассматривали Армению как транзитную страну, поэтому многие из них, переехавшие в Армению, в конечном итоге иммигрировали в другие страны. Приток и обустройство значительного числа иркских армян в Армении подорвало и изменило обоснование противодействия репатриации многих армян диаспоры как на родине, так и в диаспоре.

REPATRIATION OF IRAQI ARMENIANS AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY

Ara Hovhannisyan

Key words: *Iraqi Armenians, repatriation, social and economic problems, integration, transit country, status, support, concept, Armenian communities.*

Due to the war in Iraq in 2003, a significant number of Armenians immigrated to Armenia. The main reason for coming to Armenia was that they considered Armenia their homeland. Some Iraqi Armenians settled in Yerevan, while others moved to other parts of Armenia. Despite the support of the state, non-governmental and international organizations, as well as individuals, some of them faced social and economic problems in Armenia. Integration processes were also quite complex. The vast majority of Iraqi Armenians living in Armenia have received Armenian citizenship. Some Iraqi Armenians viewed Armenia as a transit country, so many of them who moved to Armenia ended up immigrating to other countries. The influx and establishment of a significant number of Iraqi-Armenians in Armenia undermined and changed the rationale for opposing the repatriation of many Diaspora Armenians, both in the homeland and in the Diaspora.

Արա Էդուարդի Հովհաննիսյան *– Հայոց պատմության ամբիոնի դոցենտ*

Ара Оганесян *– кандидат исторических наук, доцент кафедры Армянской истории*

Ara Eduard Hovhannisyan*- Candidate of History, Associate Professor/ Chair of the History of Armenia*